ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Սինոդը՝ Լուսաւորութեան Նախարարի հետ խորհրդակցելուց յետոյ՝ մի չրջաբերականով դիմում է բոլոր առաջնորդներին յայտնելով հետևեալը.

1) Հոգևոր կոչումն ունեցող անձինք չեն կարող մտնել համալսարանի բժշկական և բնագիտական բաժինները. որովհետև անարիւն զոհի պաշտօնեաներին անյարմար է անդամահատութեան գործողութիւններ և բնագիտական աշխատանքներ, որ արիւն է թափւում։

2) Ներկայումս համալսարաններում և այլ աշխարհական դպրոցներում սովորող սրբազնագործ պաշտօնեայք ենթարկւում են հոգևորականների համար սահմանուած հսկողութեան։

3) Հրամանագրել, որ համալսարաններում ընդունուած քահանաները ներկայանան իրենց մեծաւորներին և ընդունեն իրենց վերաբերեալ կարգադրութիւնները. այլ և պահանջել որ բժշկական կամ բնագիտական բաժանմունքների քահանաները փոխեն իրենց առարկաները կամ վերադառնան իրենց տեղերը։

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կարդինալները երեք երեք են մեռնում. Այս մի հին ռոմանական հաւատալիք է. որ կազմուել է երևի դարերի ընթացքում։ Այսօր էլ կարծես այս հաւատքը հաստատելու համար երկուսը՝ Ադամի և Տրիպլինի կարդինալները աւելացել են «առհաս իւրեանց», իսկ Կազետտին մահամերձ դրութեան մէջ է։ Հարկաւ ռոմանական հաւատալիքը ծիրանաւորի վերջին յոյսն էլ ջնջել է։ Արդէն պապը՝ ըստ սովորութեան ուղարկել է իւր առաքելական վերջին օրհնութիւնը. Առաջին երկուի դրամական կարողութիւնը 1½ միլ. ֆրանգի է հասնում և կտակած է պապին. իսկ վերջինիս կտակը, որ հաւատացած են թէ պատրաստ է, դեռ յայտնի չէ։

Ցակամայից մարդ համեմատում է այս բարձրաստիճան եկեղեցականների նիւթական կարողութիւնը Հայոց՝ վերջերս